Հուսիկ Արա

Թերակղզի

Ճայը՝ սպիտակ թռիչք,
կտրում է կապույտը հավասար.
թևերից վերև ասում է՝ երկինք
ու ծով է ասում թևերից ներքև:
Կեսգիշերին երկու կապույտ է առանց ցամաք:

Աստված վաղուց է բնակվում այս թերակղզում:
Վաղնջական են տապանը, գիրը
և խաչը՝ քարին փորված:
Մութ եկեղեցու ավերներ,
ու երկու գմբեթ՝ դեռ բաց դռներով:
Տաճար ունեին նախա աստվածներն այստեղ:

Հի՞ն է, թե՞ նոր ժամանակը.
դեռ պատմում են
1000 տարի առաջ
ծովամարտը արքայի:

Նորից չեմ մտնի օգոստոսը այս,
ուրիշ կլինի ամառը հետո.
անկապույտ,
առանց լողափի մերկության՝
օտար լեզվով աղջկա,

որ ճայի սպիտակ թռիչքն էր
ավազին պառկած: